ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 թ. Աշտարակ, Վ. Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԵՎ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ շրջանավարտներ, ընդունեք ջերմ շնորհավորանքներս՝ «Վերջին դասի» առիթով:

Այս ճամփաբաժանը ձեր կյանքի կարևոր իրադարձություններից է, և ոսկե ակնթարթն այս ողողված է ձեզ ուղղված ծնողական օրհնանքներով ու սրտագին բարեմաղթանքներով:

Ուզում եմ, որ կյանքում կարևոր որոշումներ կայացնելիս առաջնորդվեք այն իմաստությամբ ու մարդկային բարձր արժանիքներով, որոնցով ձեզ սնել են ձեր թանկագին ուսուցիչները:

Թող վերջին դասի քաղցրահնչյուն զողանջները ամուր կամրջեն ձեր դպրոցական կյանքն ու այն նոր ուղին, որը դառնալու է ձեր ապագայի խոստումնալից սկիզբը:

Մենք ձեզ հետ կապված մեծ հույսեր ունենք և հավատում ենք, որ դուք դառնալու եք վաղվա պետությունը պահող ամուր ձեռքը:

Այսօրվա հերոսները դուք եք, սիրելի՛ շրջանավարտներ, վայելեք ձեր օրը, լայն ժպտացեք և թող ձեր աչքերի փայլը երբեք չմարի:

Շնորհավոր «Վերջին դաս»:

ՁԵՐ՝ ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

22-ը մայիսի, 2026թ.